


“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԵ. Կ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒՍԱՐ 1, 1896

ԹԻՒ 1



ԾՆՆՌԵԱՆ ՏՕՆԸ

Աստուածաշունչ կարգացող գրեթէ ամէն ազգ շննդեան Տօն պահելու իր յատուկ կերպն ունի : Աւստրիոյ և Գերմանիոյ շատ կողմերը Յունուարի վեցերորդօրը կը պահուի իբրև շննդեան Տօնին մասը և կը կոչուի «Թագաւորաց սօնախմբութիւնը» : Երեք տղաք իբրև թագաւոր հազուած և իրենց գլուխները թագեր դրած կ'երգեն մոգերուն պատմութիւնը անոնց՝ աստղին հետեւելէն մինչև ծունկի վրայ գալը մտերին մէջ պառկած Մանուկին առջև :

Երբ աստղին երգը կ'աւարտի, բոլոր ընտանիքը կը ժողովուի սիրուն սենեակի մը մէջ, ուր իրարու ընծաներ կու տան և իրար կը շնորհաւորեն :

Գերմանացիք նաև շնունդի շառն ունին . ինչպէս նաև Անգղիացիք և Ամերիկացիք :

Ամերիկացի և Անգղիոյ մէջ հին և ամենէն քաղցր սովորութիւններէն մին պատկերին մէջ ներկայացուածն է : Հոն կը տեսնենք թէ տղաք իրենց գուլպաները կախած են բաց վառարանին վերևը, և կամացուկ մը անկողին երթալու կը պատրաստուին, որպէս զի ծխնեղոյղէն վար իջնէ Սանթա Բլոզ որ բոլոր փոքրիկները կը կարծեն թէ կու գայ և ընծաներով կը լեցնէ իրենց գուլպաները : Երբ տղաքը բաւական կը մեծնան, կը սորվին թէ Սանթա Բլոզ իրենց ընտանիքին մեծ անդամներէն մէկն է որ ամէն աչքի՝ քնանալով գոցուելուն կը սպասէ, որպէս զի ընծաները բաժնէ :

Բոլոր քրիստոնեայ երկիրներուն մէջ այն ժամանակէն հետէ որ հրեշտակները երգեցին «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն» յննդեան ճօնը զնմութեան ժամանակ եղած է. բայց միշտ տղայոց է որ ամենէն մեծ զնմութիւն կը բերէ: Վասն զի այդ օրն էր որ երկինքէն երկիր իջաւ Մանուկը որ է Աստուած և Տէր ամենուն: Անիկա ուրիշ տղոց պէս էր, սա տարբերութիւնով որ իր սիրտը լեցուն էր սիրով աւելի դէպ ի բոլոր միւս տղաքը քան դէպ իր անձը: Իր զխառուր փափաքն էր միւս տղաքը երջանիկ ընել և առաջ-

րէնքը կը պահէր, Ձատիկը տօնած էր երուսաղեմի մէջ: Յաւով տեսած էր թէ երբ որ տաճարը կու գար, հոն առուտուր կ'ըլլար: Բայց հիմա իր հրապարակային պաշտօնին մտած ըլլալով իբրև Որդի Աստուծոյ, պէտք էր որ ի գործ դնէր իր ժառանգած իշխանութիւնը և վերցնէր այդ շարիքը: Ամէն տարի Ձատիկը տօնելու համար իբր երկու միլիոն հոգի կ'երթային երուսաղէմ: Ասոնք պէտք էր որ զահ մատուցանէին տաճարին մէջ: Պէտք էր որ տեղէ մը գտնէին զօհուելու կենդանիներ: Ամէն մարդ տարին անգամ մը պարտական էր մէկ սիկղ արծաթ

Քրիստոս դուրս վունտեց կենդանի ծախողները այն չուաններով որոնցմով անոնք իրենց արջառները կը տանէին:

Բաւ աղաւնի ծախողներուն, «Ասկէ վերցուցէք ատոնք:» Յրուուած ստակը կրնային ժողովել, դուրս հանուած ոչխարները և արջառները կըրնային նորէն ձեռք անցընել անոնց տէրերը, բայց եթէ աղաւնիներն արծակէր, դժուար պիտի ըլլար դանոնք նորէն բռնել. թէև պատկերը այս մասին սխալ կը ներկայացնէ իրողութիւնը: Մեր Տէրը ինչ հողածութեամբ ցուցուց իր տհաճութիւնը մեղքին դէմ՝ առանց ստացուածքի կորուստ յառաջ բերելու: «Իմ Հօրս տունը առուտուրի տուն մի ընէք:» Չարմանալի է որ ո՛չ քահանայ և ո՛չ փաճառական բնդդիմութիւն ըրին Քրիստոսի: Ո՛վ կրնայ կայնիկ երբ անիկա երևնայ: Յանցաւոր խիղճը չկրնար:



«ՄԵՆԸ ՏԱՃԱՐԷ ԴՈՒՐ ՉԱՆՑ»

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ ՄԵՋ ԿԻՐԱԿԻ ՄԸ

Անցեալ Սեպտեմբերին կիրակի առաւօտ մը փոքրիկ թուխ փետուրներով թռչուն մը հիւանդանոցի մը մէկ բաց պատուհանէն ներս մտաւ: Թռչնիկը իր չորս կողմը նայելով ստակացած ժամանակ մը իր փոքրիկ թւերը ուժգին զարկաւ պատուհաններուն և պատերուն՝ դուրս ելելու անօգուտ ջանքերով: Քսան զոյգ աչքեր, ոմանք ամիսներով տանջուելէ և ճերմակ պատերուն նայելէ աղօտացած, ոմանք անբնական կերպով պայծառացած և տենդով բողբոջուած, և ամէնքն ալ համակրութիւնով զգածուած, անձկութեամբ կը հետեւէին փոքրիկ թռչունին ամէն մէկ շարժումին: Յոգնած և տան կարօտով չարչարուող քսան սիրտեր արագ արագ կը շարժէին դիմութիւնէ, տեսներով որ խեղճ թռչնիկը ատեն ատեն կը թռչտէր երկինքով և տագնապով և սրահին պատերուն կը զարնուէր: Եւ ահա յողնած և տկարացած և թերեւս տեղին շատ հանգըստաւէտ ըլլալէն հրապուրուած՝ տախտակամածին վրայ ինկաւ: Հոն գլուխն ուղնները վերցուցին զայն փափուկ ձեռքերով, շիտկեցին անոր խառնափնթորած փետուրները և զգուշութիւնով դուրս արձակեցին զայն պատուհանէ մը: Լուսութիւնը կը տիրէր անոր երկարատև խղճալի ճիգերը ու շաղթութեամբ դիտողներուն մէջ: Յանկարծ թռչնիկը հասկնալով որ ազատուած էր, գեղեցիկ և քաղցր երգ մը սկսաւ երգել երբ իր փետուրները կը շիտկէր թռչելու համար: Ասոր վը-

նորդել զանոնք իր սիրելի Հօրը որ երկինքն է:

Ինչ պատիւ էր Բեթլեհեմի Աստղին՝ զրկուիլ և Յիսուսի առաջնորդել մոգերը և հովիւներն այդ գիշեր: Լուսիս, պատկերին մէջի տղոց ամենէն մեծը, իր քրոջ և եղբոր կ'ըսէ, «Թերեւս, եթէ մենք ալ ջանանք, կրնանք լոյսեր ըլլալ այդ աստղին պէս առաջնորդելու մարդիկ մեր սիրելի փրկչին:»

ՅԻՍՈՒՍԻ՝ ՏԱՃԱՐԸ ՄԱՔՐԵԼ

Քրիստոս Տաճարը մաքրեց իր առաջին հրաշքէն ետքը: Աշակերտներուն հետ շատ օրեր կեցած չէր իր քաղաքը: Մէկ տեղէն միւսը կ'երթար արտօրարով, վասն զի շատերը իրեն պէտք ունէին: Մինչև այս ատեն Մովսիսական օ-

վճարել տաճարին պաշտամունքին համար: Այս պատճառաւ իրենց ստակը պէտք էր որ փոխուէր երկրին ստակին: Ուստի այս պատրուակով բայց իրապէս չահի համար քահանայացիները առուտուրի գործ մը սահմանած էին տաճարին մէջ: Անտարակոյս, զոհի անասուն, աղաւնի և այլն ծախողներուն և ստակ փոխողներուն կենալու տեղերուն վարձքը բաւական եկամուտ կը բերէր:

Շարունակ եզոզ սակարկութիւնները իրենց կը քայէին երկրպագութեան եկողներուն խորհուրդները, և այսպէս պաշտամունքի ատեն կը ցրուէին անոնց բոլոր շերմեռանդութեան զգացումները: Յիսուս տեսնելով այս բանը, ա՛լ կարող չեղաւ համբերել. ուստի գետնէն չուաններ գտնելով անոնցմէ խարազան մը շինեց և տաճարէն դուրս հանեց անասունները:

րայ ամէն աչք պայծառացաւ, և ամէն սիրտ պատասխանեց այդ մնաք բարոյի երգին: Անշուշտ երկինքէն զրկուած էր այդ թռչունը: Անոր այցելութիւնը բարիքի նշան երևցաւ այն յոգնած հոգիներէն դէթ մէկուն, որ կին մըն էր: Արագութեամբ հեռացող այն երգին վերջին մեղմ եղանակը անոր կը յիշեցնէր իր մանկութեան և աղջկանութեան օրերը, երբ իր մօր տունէն կը լսէր թռչուններուն երգելու ձայները որ կը խառնուէին մօտէն վազող խճախից վտակի ծանծաղ ջուրերուն ծփծփալու ձայնին և եղևիններու տերևներուն սուսախնին հետ:

Եւ մըն էր ետքը ծերունի բժիշկը եկաւ իր ամէն օրուան այցելութիւնն ընելու: Անձկոտ և գրեթէ պատկառօտ դէմքեր անոր ուղղուեցան երբ կ'անցնէր իրենց մէջէն՝ մէկուն քաջաբերիչ խօսք մը ընելու, մէկուն համակրանքով ձեռքը սեղմելու, մէկուն քաղցր նայուածք մը նետելու, ուրիշի մը ձեռքին կամ ուսին սիրով դպչելու: Փութորկալից օր մըն էր: Հովերը և ջուրերը ահաւելի էին: Կէսօրէն ետև ուշատեն հիւանդանոցի մայրը, ծերուկ և մեծարոյ կին մը, Պրնիանի ճամբորդութեան գիրքէն կարդացած էր յըստակ և կիրթ արտասանութիւնով քրիստոնէից երկինք հասնելուն պատմութիւնը: Այդ յոգնած հոգիներուն, որոնք յաւիտենականութեան եղբրքը կը գեղեցնէին, երկինքը շատ մօտ կ'երևնար այդ վայրկեանին: Եւ արդարև անոնց շատերուն համար միայն մէկ քայլ մնացած էր Ժամանակին սեմէն անվախճան Յաւիտենականութեան անցնելու: Երբ տիկինը գոցեց և մէկդի դուռ գիրքը, մեծ լռութիւն տիրեց սրահին մէջ:

Գորշ, ցուրտ վերջալոյսը եկաւ, հովը և անձրևը իրենց մերամաղձոտ եղանակը կը զարնէին այն բարձր, նեղ շէնքին բազմաթիւ պատուհաններուն դէմ, և սրահին մէջ քաղցր, ողբաւայն և գթութեան արժանի տկար ձայն մը սկսաւ երգել «Բեզի կարօտ եմ, Տէր» երգը: Զայները հետզհետէ շատցան և միաբան երգեցին, «Օրհնէ զիս, ով Փրկիչ իմ, քեզի կու դամ»: Տկար, դողդոջուն ձայներ, ոմանք շատ մեղմ և յստակ, ոմանք ցաւով ծանրացած, թէպէտ զսպելով արցունքները, երգեցին,

«Երբ մօտ ըլլաս, փորձանքն կը թեթևնայ»  
Երբ երկրորդ տունը երգել սկսան, կանաչ թաղիքէ դուռը մեղմով բաց-

ուեցաւ, յետոյ գոցուեցաւ, և ահա հիւանդանոցին բժիշկը ուղղակի մտաներս և ցած, յստակ և ներգաշնակաւոր բամբ ձայնով միացաւ երգել.

«Բեզի կարօտ եմ, Տէր, շուտով եկուր, թէ ոչ իմ կեանքս բոլոր կ'անցնի ի դուր»:

Լռութիւնը պատեց սրահին մէջ, մինչև որ մէկը, որ շատ տկար ըլլալուն համար չէր կրցած միւսներուն հետ երգել, արտասանեց.

«Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզի պիտի ըսէի: Հիմա կ'երթամ ու ձեզի



ՓՈՌՔԻԿ ԵՂԻՍԱԲԵՐԸ

տեղ կը պատրաստեմ»  
«Եւ ինքը (Աստուած) անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, և ալ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ և ոչ արդալակ և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետև. ինչու որ առջի բաները անցան»:

ՅԱԿՈԲԻՆ ՊԱՏԿԵՐԻ ՏԵՏՐԱԿԸ

Պատկերին մէջի փոքրիկ եղիսաբէթը դժգոհ և ասպերջանիկ չերևար: Ժամանակ մը այնպէս էր, և ինչ է պատճառը կը կարծէք: Շատ բարեկամներ ունի և չորս կողմը լեցուն գեղեցիկ բաներ կան, վասն զի իր հայրը հարուստ է և իրեն տուած է բոլոր ուզած բաները: Եղիսաբէթի ոտքը վրաստուած է, ուստի չկրնար քայլել, բայց իր արտմութիւնը ցաւին համար չէ:  
Բժիշկը երբ եկաւ, հարցուց թէ

ինչու համար այնպէս արտում կ'երևնայ: Աղջիկն ըսաւ թէ ձանձրացած էր անդործ մնալէն: Կը փափաքէր իր բոլորտիքը ճառագայթած արևին մէջ խաղալ ցատկել: Բժիշկը առաջարկեց անոր՝ իրեն աշխատակից ըլլալ: «Բայց», ըսաւ Եղիսաբէթ, «դուն մարդ կը բժշկես: Ես բան չեմ կրնար ընել հիւանդները բժշկելու համար»: «Այո, կրնաս», ըսաւ բժիշկը. «Տիչդ այդ է ինչ որ կ'ուզեմ որ ընես: Այս առաւօտ փոքրիկ Յակոբին քով գացի: Նա փոքրիկ կաղ աղայ մըն է որ քեզմէ աղէկ չկրնար

քայլել, և շատ ժամանակ պէտք է իրեն աղէկնալուն համար: Շատ աղքատ ընտանիքի մը զաւակն է, չունի խաղալիքներ և գեղեցիկ պատկերազարդ գիրքեր որոնց վրայ նայի ինչպէս դուն ունիս: Կարծեմ եթէ Յակոբի համար պատկերի տետրակ մը պատրաստես, անոր աւելի օգտակար պիտի ըլլայ քան մեծ շիշ մը դեղը»: Ասկէ քանի մը օր ետքը Եղիսաբէթի երեսը զուարթ էր և ձեռքերը գործով զբաղած, վասն զի լրագիրներու և հանդէսներու մէջէ պատկերներ կը կարէր կը հանէր և զանոնք պարապ երեսներ պարունակող տետրի մը մէջ կը փակցնէր կաղ Յակոբին համար: Երբ

պատկերին տետրակը պատրաստուեցաւ, Եղիսաբէթի հայրը Յակոբի տարաւ զայն: Երբ Յակոբ քակեց ծրարը և իմացաւ որ գիրքը իրենը պիտի ըլլար, ուրախութենէն ձեռքերը իրար զարկաւ: Շատ մը երջանիկ ժամեր անցուց պատկերներուն վրայ նայելով, և երբ իր սաստիկ աշխատանքի տակ ճնշուած մայրը լսեց անոր խնդալուն ձայնը զուարճալի պատկերի մը նայած ժամանակը, ըսաւ, «Աստուած օրհնէ այդ մարդասէր փոքրիկ օրիորդը»:

ԻՆՉ ԿԵՐՊՈՎ ԱՉԱՏ Կ'ԸԼԼԱՆՔ  
Ամենէն աղէկ դասը զոր առած եմ, հօրս խօսքն էր, «Որդեակ, ա՛լ մեծցած ես, պէտք չէ որ ծեծ ուտես, և հիմա երկու կերպ կայ որոցմով աղայք կը դադրին ուրիշներէն կա-

ուսուցանել է: Եթէ անոնք կ'որոշեն ծուռ բան ընել, հայրը պէտք է որ զսպէ զանոնք որչափ ասեն որ կրնայ, և ես պահէ չարէ՛ կարողութեանը չափ ամէն միջոց գործածելով, մինչև որ վերջապէս բաւական զօրաւոր ըլլան և իրենք իրենց թողուելու յարմար: Միւս կերպն է աղին ինքզինք կառավարել սորվիր և բարութիւն սիրելը, այն ատեն իշխանութեան կապերէն կ'արձակուի, վասն զի այլ ևս պէտք չեն ըլլար անոնք: Ո՛չ հայրը գիտէ և ո՛չ աղան թէ ճիշդ ե՛րբ կը դադրի այդ կառավարութիւնը: Ո՞ր կերպը կ'ընարէ իմ աղաս:»

Երբեք մուցած չեմ այդ խօսքերը: Եւ սակայն այն ատեն չէի հասկնար թէ աղայ մը որ իր հօր իշխանութեան տակէն կ'ելլէ, ատով աղատ չըլլար, եթէ գերի է իր մեղքերուն: Այն որ չի բեր բարութիւնը, աւելի աղատ չէ քան մեքենայ մը որ ճամբէն դուրս կ'ելլէ, կամ ձուկ մը որ ջրէն դուրս տաք, չոր աւազին վրայ կը ցատկէ:

Ամերիկա բանտի մը մէջ պաշտօն վարող եկեղեցական մը կը պատմէ թէ օր մը մարդ մը կառավարչին ներման թուղթը ձեռքը բռնած ներս մտաւ: Ի՞նչ ուրախութեամբ աղաղակեց, «Ես ազատուած եմ, շուտով արձակեցէք զիս ասկէ:»

Շուտ մը բանտային հանդերձները հանեց ուրիշ հանդերձներ հագաւ, և աճապարանօք վազեց դուրս: Բայց ես աղէկ գիտէի որ այդ մարդը ազատուած չէր, վասն զի չար կիրքերու գերի էր, և զինք ճանցողներէն ոչ մէկը զարմացաւ երբ քանի մը ամիս ետքը այդ մարդը նորէն բանտ բերուեցաւ:

Մեղամ մը խեղճ հիւանդ մը հիւանդանոց կանչեց իր կինը և մայրը անոնց Մնաք բարով ըսելու համար: Ի՞նչ սրտաշարժ էր տեսնել այդ կիներուն թափած արցունքները, վասն զի մարդը կարող չէր ողջ դուրս ելլել բանտէն: Բայց նա հանդարտ և գրեթէ ուրախ էր: Սորված էր վըստահիլ իր Աստուծոյն, զոչացած էր իր մեղքերուն վրայ, և շուտով ազատ պիտի ըլլար Նոր Երուսաղեմին մէջ: Ազատ անոնք են միայն որ բարութիւն կ'ընեն: Պատանիներն ու երիտասարդները այս տեսակ ազատման փափաքելու են. և երբ կը հասնին իրենց փափաքին, թէ՛ ծնողքները և թէ՛ զաւակները միասին կ'ուրախանան:

Այս ազատութիւնը կամայ կա-

մայ կու դայ: Փոքրիկ մանուկը որ սորված է առանց իրեն ըսուիլ հարկ թողուլ՝ իր երեսը լուալ առաւօտնէրը և դպրոց երթալ ճիշդ ժամանակին, աղատ եղած է այդ բաներուն մէջ և մարդ եղած է: Քանի՛ մէկիկ մէկիկ յաղթէք ձեր չար ունակութիւններուն, և քայլ առ քայլ սորվեք զսպել ձեր անձնասիրական կիրքերը, ձեռք կը բերէք ձեր ազատութիւնը, միակ ազատութիւնը՝ զոր կըրնաք ունենալ: Չեր հօր և մօր սիրալիր և աշաւորջ խնամքը ձեզ պիտի չնեղէ երբ անոնք սովորած են վատահիլ ձեզի, և ձեր երկնաւոր Հօր կառավարութիւնը բեռ մը պիտի չըլլայ ձեզի, ինչպէս բեռ չէ օգը զոր կը չնչէք և լոյսը որուն միջոցաւ կը տեսնէք, և դուք ուրախ պիտի ըլլաք Անոր ներքեւ յաւիտեան:

ԻՆՉՊԷՍ ԻՄԱՅՈՒԵՑԱԻ ՍԱՌԱՅԻ ՅԱՆՑԱՆՔԸ

Մեծ հայրը սանդուղին ետևի կողմէն կամացուկ մը վար խոհանոց իջաւ, ուր Սառա խնձոր մը կ'ուտէր և կը ջանար այնպէս երևիլ իբր թէ կեանքին մէջ երբեք գէշ բան մը ըրած չէր: Մեծ հայրը շտակ անոր մօտեցաւ, և իր օրորոց - աթոռին վրայ նստելով Սառան իրեն քաշեց և գուրգուրանքով շայեց, մինչ ծանրութեամբ անոր կապոյտ աչքերուն մէջ կը նայէր:

«Այս առաւօտ», ըսաւ, «փոքրիկ աղջիկ մը սենեակս եկաւ, ուր իր մայրը արգիլած էր երթալ. մահճակալիս վրայ ելաւ, բռնեց անոր բարձր սիւներէն, և գնաց անոր գլուխը. յետոյ հասաւ ժամացոյցիս քով և գամին վրայէն հանեց առաւ զայն, և բարձիս վրայ նստած՝ ուղածին չափ նայեցաւ անոր վրայ: Մնկէ ետև զգուշութիւնով վար իջաւ մահճակալին ոտքը և մէկ կողմ ցատկեց գնաց, կարծելով թէ ոչոք տեսած էր զինքը:»

«Ո՞վ տեսաւ զանիկա», հարցուց Սառա, դադա գործուած յանցանքը յայտնելով: «Աստուածաշունչը ինձի կու տաս, սիրելիս, պիտի ըսեմ քեզի», ըսաւ մեծ հայրը:

Սառա հանդարտ կայնեցաւ մինչ մեծ հայրը ակնոցներն աչքը կը դնէր, և կամացուկ կամացուկ անոր թուղթերը կը դարձնէր մինչև որ գտաւ ուղած տեղը: «Կարգաւ ասիկա, սիրելիս», ըսաւ. բայց Սառա հեզելով միայն կրնար կարգալ, և ուստի բա-


ւական ժամանակ անցաւ մինչև որ կարգաց: Երկու երեք անգամ շանայէն ետքը յաջողեցաւ որոշ կարգալ. «Գուն, Աստուած, կը տեսնես զիս:»

Յետոյ մեծ հայրը շատ լըջութիւնով խօսեցաւ անհնազանդութեան մեղքին վրայ, և մեղքը ծածկելու յանցանքին վրայ: Եւ Սառա շատ զոջաց և որոշեց բարի աղջիկ մը ըլլալ այնուհետև: Մեծ հայրին վրայ նայեցաւ մեծ վախով:

«Աստուած ըսած է անոր», ըսաւ ինքնիրեն: «Ո՛հ, ի՞նչ ահաւոր բան է Աստուծոյ շտակ վրաս նայիլ, և յետոյ ըսելը մեծ հայրին՝ բոլոր ըրածս: Մեծ հայրս ի՞նչ բարի մարդ է ուրեմն որ Աստուած կը խօսի անոր հետ: Ինձի կ'երևի թէ անոր երեսը կը փայլի ճիշդ Մովսէսի երեսին պէս երբ նա իջաւ Սինա լեռնէն:»

«Կօչիկներդ հանեցի՞ր, մեծ հայր:» «Կօչիկներս, ի՞նչ ըսել կ'ուզես, սիրելիս:» «Երբ Աստուած խօսեցաւ հետդ վերը, և ըսաւ քեզի թէ ես անկողնիդ վրայ քալեցի, կօչիկներդ ոտքերէդ հանեցի՞ր, Մովսէսի պէս:»

«Ո՛հ, սիրելի դստրիկա», ըսաւ մեծ հայրը, տարօրինակ նայուածքով մը, «Աստուած հիմա իր զաւակներուն հետ երես առ երես չխօսիր, այլ կ'առաջնորդէ և կ'ուղղէ զանոնք ճիշդ ինչպէս կ'ընէր Մովսէսի ժամանակը: Կարծեմ ինքն էր որ զիս այս առաւօտ սենեակս առաջնորդեց և կակուղ փետրալից բարձիս վրայ տեսնել տուաւ քու հոն թողած խորունկ ոտքի նշաններդ, այնուհետև տեսնելով մօրդ խնամով յարգարած բարձս բոլորովին խախտած և կնճռած նաև տեսնելով քու փոքր մէկ սխալդ որ ժամացոյցս կախելու ատենդ երեսը պատին ըրած էիր, չէի կրնար չգիտնալ թէ ի՞նչ ըրած էիր դուն:» Հոս շատ լուրջ կերպարան մը առաւ մեծ հայրը, և ըսաւ, «Աստուծոյ խօսքին մէջ համար մը կայ, փոքրիկ Սառա, զոր աղէկ կ'ըլլայ որ փոքրիկ աղջիկները և մանչերը և չափահաս այրերը և կիներն ալ, միտք պահեն. «Չեր մեղքը անուշաբերութեամբ տեսէ:» Եւ չեմ կարծիք թէ Սառա երբեք մուցաւ զայն:»



Ամերիկայի Մեծ Երկրի Կաթնալուծիչ Կոմիտէի Ինքնուրուպ Գործարարական Կոմիտէի Կողմէն  
Տնօրէն—Մարտին ԳԱՐՆԸՄ  
Ֆինանսներու Եղբուշտ, Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՅՊԱՐԱՅԻ Ա. ՅԱՒՈՐ ՊՅՈՒՆԵՆ